ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԸԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Մ.Խորենացի 7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-13/1 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի արդյունքում 2013թ-ի նոյեմբերի 25-ին կնքված պայմանագրում 2014թ-ի փետրվարի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Վճարման պայմաններում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Փոփոխության նկարագրություն: Խմբագրվել է վճարմանը վերաբերող՝ պայմանագրի 4.2 կետը և հաստատվել է վճարման ժամանակացույցը նոր խմբագրությամբ :

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը կատարվում է պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Աղաջանյանին:

Հեռախոս՝ 060-544-697:

Էլ. փոստ՝ gnumner@customs.am:

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 2

2013թ. նոյեմբերի 25-ին կնքված N ՊԵԿ-ԲՀԱՀ-ԱՇՁԲ-13/1

պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ք. Երևան

"21" փետրվարի 2014թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գևորգյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոնստանտա Բիլդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 25/11/13թ. կնքված N ՊԵԿ-ԲՀԱՀ– ԱՇՁԲ-13/1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին Պայմանագրի՝

1.1. 4.2 կետում նշված <<1-ին փուլի շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացման գումարը Կապալառուին հատկացվում է սույն համաձայնագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում՝ 100 տոկոս կանխավճարի ձևով, սակայն ոչ ուշ քան 2013թ. դեկտեմբերի 25-ը: Կանխավճարի մարումը իրականացվում երկկողմ ստորագրված հանձնման - ընդունման արձանագրության հիման վրա:>> բառերը փոխարինել <<1-ին փուլի շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացման գումարը Կապալառուին հատկացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ 5 բանկային օրվա ընթացքում՝ սույն պայմանագրի N2 հավելվածով նախատեսված ամսում>> բառերով:

1.2 N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 2013թ. դեկտեմբերի 20-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում էերկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա պ ա լ ա ռ ու
ՀՀ ԿԱ ՊԵԿ	<<ԿՈՆՍՏԱՆՏԱ ԲԻԼԴ>> ՍՊԸ
Ք.Երևան, Խորենացի 7	Ք. Երևան, Դավիթաշեն 2 թաղ, 11շ, 14 բն
ՀՎՀՀ 02591206	ՀՎՀՀ 01400685
հ/հ 900013574018, 900013202016	հ/հ 24100500619200
Կենտրոնական գանձապետարան	<<Յունիբանկ>> ՓԲԸ
գործառնական վարչություն	
Աշխ.ղեկավար՝ Ա.Գևորգյան	Տնօրեն Ա.Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված

25 նոյեմբերի 2013թ. Կնքված N ՊԵԿ-ԲՀԱՀ-ԱՇՁԲ-13/1 պայմանագրի հիման վրա

2014թ.կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2013թ. արտաբյուջետային հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում		
	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Այունիքի տարածաշրջանային մաքսատան վարչական շենքի օժանդակ շինությունների և տարածքի բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	19500000	19500000	19500000

1-ին փուլի շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2014թ. արտաբյուջետային հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
	Փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
	500000	500000	500000	1020000	1020000	1020000	1020000	1020000	1020000	1020000	1020000	1020000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

Պատվիրատու

Կապալառու